Պատասխաններ (գնահատման քայլը՝ 0,25)
9-րդ դասարան

1. ա) Վիկտորիա - մայրաքաղաք (Սեյշելներ)
   բ) Վիկտորիա - ջրվեժ (Աֆրիկա)
   գ) Վիկտորիա - կղզի (Կանադա)
   դ) Վիկտորիա մեծ - անապատ (Ավստրալիա):

2. ա) Կուբա, Չիլի, Էկվադոր, Գվատեմալա:
   բ) Սուրինամ, Հոնդուրաս, Մեքսիկա, Արգենտինա:

3. Տրված են պետությունները, մարդաշատությամբ խոշոր քաղաքները և մայրաքաղաքները
   գ) Նիգերիա - Լահոս - Աբուջա
   դ) Ավստրալիա - Սիդնեյ - Կանբերա

4. ա) Ծաղկունյաց, Պապաքարի, Միափորի, Վիրահայոց
   բ) Բազումի, Սևանի, Վայքի, Զանգեզուրի:

5. ա) Հյուսիսային բևեռը, քանի որ երկրագունդը բևեռներից սեղմված է և բևեռային շառավիղը (6357 կմ) 21 կմ-ով ավելի կարճ է, քան հասարակածայինը (6378 կմ),
   բ) հյուսիսային բևեռում օվկիանոս է (Սառուցյալ), իսկ հարավայինում՝ ցամաք (Անտարկտիդա), որը պատված է հզոր սառցադաշտով:

6. 6960մ – 500մ =6460մ

   1000 մ – 6^0 x = 38,76 = 39^0 30 - 39^0 = -9^0
   6460 մ - x

   Պատ. – 9°

7. 6.000.000 – x x = 90.000 մարդ: Պատ.90.000 մարդ
   1000 - 15

8. Արգիճի, Գավառագետ, Ձկնագետ, Մասրիկ:

9. 2) 4), 6), 7):

10. 1) ա) Կզարգանա նավթավերամշակումը և նավթաքիմիան
    բ) էներգահաշվեկշռում կմեծանա նավթից ստացվող էներգիայի արտադրությունը
    գ) կկառուցվեն նավթամուղներ և կմեծանա արտաքին առևտրի հաշվեկշիռը
    դ) կաղտոտվի շրջակա միջավայրը
    2) ա) կկրճատվեն անտառային զանգվածները և կընդլայնվեն կիսաանապատա-անապատային տարածքները
    բ) վերընթաց գոտիները կտեղաշարժվեն ավելի վեր
    գ) կխախտվի գետային ռեժիմը և գետերն ավելի սակավաջուր կդառնան
    դ) կմեծանա աղքատությունը և արտագաղթը:
    (Ընդունելի համարել նաև աշակերտի մյուս ճիշտ մեկնաբանությունները)

11. Արևադարձերում մթնոլորտային բարձր ճնշումը պայմանավորված է մթնոլորտի շրջանառությամբ և երկրի օրական պտույտով: Հասարակածում միշտ ցածր ճնշում է: Օդը տաքանալով բարձրանում է վեր, առաջացնում տեղումներ, իսկ չորացած օդի մի մասը շարժվում է հյուսիս, մյուսը՝ հարավ: Երկրի օրական պտույտի շեղող ուժի հետևանքով օդը հյուսիսային կիսագնդում շեղվում է աջ, իսկ հարավայինում՝ ձախ և կուտակվում է արևադարձերի վրա: Այստեղ օդը շատանում է, խտանում և վարընթաց շարժում կատարելով արևադարձերից շարժվում հասարակած՝ պասսատների տեսքով: Այսպիսով, հակապասսատների շնորհիվ արևադարձերում ստեղծվում է բարձր ճնշում:

12. **Դրական**

ա) Գտնվում է Եվրոպան Կենտրոնական ու Հարավային Ասիային և Ռուսաստանը Մերձավոր Արևելքին կապող միջազգային ուղիների խաչմերուկում,

բ) այստեղով է անցնում «մետաքսի ճանապարհը»,

գ) այստեղով են անցնում Հյուսիսային Կովկասը և Սև ծովը Իրանին և արաբական երկրներին կապող երկաթուղիներն ու ավտոմոբիլային գլխավոր մայրուղիները:

Բացասական

ա) Լինելով ցամաքային պետություն, ՀՀ-ն կտրված է ծովերից ու օվկիանոսներից և ուղղակիորեն չի կարող օգտվել դրանց հաղորդակցության ուղիներից և բնական հարստություններից,

բ) համեմատաբար հեռու է աշխարհի բարձր զարգացած արդյունաբերական երկրներից ու հզոր տնտեսական կենտրոններից:

(Ընդունելի համարել նաև աշակերտի կողմից բերված դրական և բացասական կողմերի մյուս ճիշտ մեկնաբանությունները):